

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի առաջին եռամսյակում Սյունիքի մարզպետարան

մուտք գործած և առաքված փաստաթղթերի վերաբերյալ

2019 թվականի առաջին եռամսյակում մարզպետարան է մուտքագրվել՝ 3284 թղթակցություն, առաքվել՝ 1845 փաստաթուղթ: Այդ թվում ստացվել է ՀՀ նախագահի աշխատակազմից՝ 1, ՀՀ վարչապետից՝ 108, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունից՝ 125, Հանրապետական գործադիր մարմիններից և գերատեսչություններից՝ 549, պետական վերահսկողության ծառայությունից՝ 2, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայություններից և այլ կազմակերպություններից՝ 789, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ 1078, գաղտնի թղթակցություն՝ 7, քաղաքացիներից՝ 638 դիմում: ՀՀ Սյունիքի մարզպետարան է վերահասցեագրվել 95 դիմում, որից՝ ՀՀ նախագահի աշխատակազմից՝ 2, ՀՀ Ազգային ժողովից՝ 6, ՀՀ վարչապետի աշխատակազմից՝ 50, պետական վերահսկողական ծառայությունից՝ 8, ազգային անվտանգության ծառայությունից՝ 5, մարդու իրավունքների պաշտպանից՝ 2, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունից՝ 16, հանրապետական գործադիր մարմիններից՝ 6 դիմում:

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը. ամսական մեկ անգամ մարզկենտրոնում (յուրաքանչյուր ամսվա վերջին երկուշաբթի օրը) կատարվել է քաղաքացիների ընդունելություն: Բացի այդ, քաղաքացիների ընդունելություն է կատարվել նաև մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ: 2019թ. առաջին եռամսյակում կատարվել է 145 քաղաքացիների ընդունելություն: Մարզպետի մոտ ընդունելության համար հերթագրված և ընդունելությանը մասնակցած քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար տեղադրվում է մարզպետարանի պաշտոնական կայքէջում:

Մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները քաղաքացիների ընդունելությունը կազմակերպել են ամենօրյա, աշխատանքային կարգով:

Քաղաքացիների ընդունելության, նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին հաշվետվությունը և այդ աշխատանքների վիճակի մասին ամփոփ տեղեկատվությունը սահմանված պարբերականությամբ ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ ու ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն: